



ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ
ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՏԵԽՆՈԼՈԳԻԱՉ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կարինե Պապիկյան

Երևան 2021

ԹԵՄԱ 3. ՆՅՈՒԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ 12 ժամ

Ենթաթեմա 1.

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.

Բնական և արհեստական նյութերի մշակման եղանակներ:

Դպրոցամերձ այգուց, պուրակից հավաքած բնական նյութերից՝ տերևներից, կաղիններից, կոներից, ճյուղիկներից ու արմատիկներից կարող եք պատրաստել հետաքրքիր խաղալիքներ /շինվածքներ/: Եկեք փորձենք մտովի պատկերացնել, թե ինչ կարող է դառնալ այս տերևը կամ այն մյուսը, կամ այս փոքրիկ կոնը կամ արմատը: Իսկ մինչ այդ փորձենք միացնել այդ դետալները տարբեր եղանակներով՝ պլաստիլինով, սոսնձով, մետաղալարով կամ այլ կերպ: Միացումն ավելի ամուր կլինի, եթե իրար հավոդ եզրերը մշակենք խարտոցով կամ հղկաթղթով:



Փոքրիկ դետալները կարելի է մշակել նրբախարտոցներով:



Տերևները կարելի է նաև կտրել մկրատով:



Մշակման աշխատանքները պետք է զգուշորեն կատարել: Դետալները, օրինակ՝ տերևները, կարելի է սոսնձել: Սոսնձելիս պետք է զգույլ լինել, պետք չէ սոսնձել դետալի եզրերը: Սոսնձապատված դետալները տեղադրիր համապատասխան տեղում, և մեկ այլ թղթի միջոցով հարթեցրու աշխատանքը: Պատրաստվածքը տեղադրիր ծանրոցի տակ մինչև չորանալը:

Ենթաթեմա 2.

ԳՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.


Պատրաստել ապլիկացիա, կոմպոզիցիա, խճանկար:



Քո չորացրած տերևներով, ու նաև մյուս նյութերով, որոնք դու հավաքել ես մոտակա պուրակից, այգուց, փորձիր պատրաստել ապլիկացիա:






Կոմպոզիցիան մի քանի նմուշներից, դետալներից կազմված պատկերն է:
Այժմ փորձիր պատրաստել: Գույներն ու դետալները կարող ես ընտրել ըստ ուսուցչի ցուցադրած նմուշների, նկարների, կամ ըստ քո ցանկության, ըստ քո ընտրության ու պատկերացումների:
Եկեք մտածենք ու ստեղծագործենք:







Խճանկար կարելի է պատրաստել տարբեր տեսակի սերմերով:




Այս օրինակում արևածաղիկը պատրաստված է արևածաղկի սերմերից և թղթերից՝ դեղին, կանաչ:





Հաջորդ նկարում սովորաթղթի հիմքի վրա սերմերով խճանկար է պատրաստված: Սերմերը կարելի է նախապես սոսնձապատել էմուլսիաջրով և թողնել, որ լավ չորանա: Ամրացնելու համար կարելի է շրջանը ձեփել պլաստիլինի շերտով, այնուհետև սերմերը դասավորել այսպես, ըստ նկարի:





Փորձիր անվանել այն սերմերը, որոնցից պատրաստված են նկարներում պատկերված խճանկարները:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ.

Ինքնուրույն պատրաստիր նմանատիպ աշխատանքներ:

Այժմ փորձենք նմանատիպ աշխատանքներ պատրաստել արհեստական նյութերից:



Ենթաթեմա 3.

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.

Թղթի մշակում՝ ծալում, հարթեցում, կտրում, սոսնձում:



Թղթի մշակման ժամանակ, թղթից տարբեր շինվածքների պատրաստելիս պետք է հիշել և հաշվի առնել թղթի կառուցվածքն ու հատկությունները: Օրինակ՝ նրբաթելերի երկարությամբ թուղթն ավելի հեշտ է ծալվում, քան լայնությամբ: Թղթի կառուցվածքի մասին առանձնապես պետք է հիշել սոսնձով աշխատելիս: Եթե սոսինձը քսելուց անմիջապես հետո կպցնենք, ապա, շարունակելով լայնանալ, թուղթն այդ ուղղությամբ ծռվում է, որից էլ առաջանում են անհարթություններ, իսկ դրանք դժվար է ուղղել, և աշխատանքն անորակ է ստացվում, երբեմն էլ ամբողջությամբ փչանում է: Դրանից խուսափելու համար, սոսինձը քսելուց հետո, պետք է որոշ ժամանակ սպասել, որպեսզի թուղթը խոնավությունը ներծծի, նոր միայն կպցնել-ամրացնել:

Թղթի և ստվարաթղթի հետ կատարվող հիմնական և կարևոր գործողություններն են՝ ծալում, կտրում, մակակտրում, սոսնձում, ներկում, գծանշում: Պարզաբանենք դրանք:

ԾԱԼՈՒՄ



Թուղթը ծալելու գործողությունը ամենապարզ և ամենահեշտ գործողությունն է, որի օգնությամբ կարելի է պատրաստել շատ հետաքրքիր խաղալիքներ: Եթե ծալվածքի գիծն անցնում է թղթի մեջտեղով, ապա այն ծալում են այնպես, որ համընկնեն հակադիր զույգ անկյուններն ու կողմերը: Այնուհետև, չկորցնելով առաջին մասի վերահսկողությունը, հարթեցնում են ծալման գիծը: Պետք է ուշադիր լինել, որ չխախտվի անկյունների համընկնումը:

Թղթի ծալման գործողությունը պետք է կատարել միայն սեղանի կամ այլ հարթ մակերեսի վրա:

ԿՏՐՈՒՄ



Թղթե շինվածքներ պատրաստելիս անհրաժեշտ է ունենալ երկու չափի մկրատներ՝ մեծ և փոքր, ուղիղ և թեք եզրերով: Դրանք անպայման պետք է սուր լինեն: Թուղթը կտրելիս մկատը միշտ պետք է պահել ուղիղ՝ դեպի առաջ: Մկրատը չպետք է սեղմել մինչև վերջ: Թուղթն ուղիղ գծով կտրելու համար նպատակահարմար է օգտագործել երկար մկրատ, իսկ կորագծով կտրելու համար՝ կարճ մկրատ: Սահուն կոր գծեր ստանալու համար պետք է վարժվել

աջ և ձախ ձեռքերի համաձայնեցված շարժումներին: Կտրելիս մկրատը պահել միևնույն ուղղության վրա և թուղթը պտտել: Մկրատով կտրելու և թուղթը պտտելու շարժումները պետք է կատարել միաժամանակ: Գունավոր նուրբ թղթերից տարբեր ծաղկաշղթաներ, ձյան փաթիլներ, անձեռոցիկներ և այլ առարկաներ պատրաստելիս թուղթը մի քանի տակ ծալում են: Որպեսզի ծալքերի դասավորությունը չխախտվի՝ թուղթը պետք է բռնել զգուշությամբ, որքան հնարավոր է կտրվող մասին մոտ: Տարբեր անկյուններ կտրելիս պետք է սկզբում կտրել անկյան մի կողմից մինչև գագաթը, իսկ հետո՝ մյուս կողմից:

<p>Մկրատով աշխատելիս պետք է ուշադիր լինել և պահպանել անվտանգության կանոնները:</p> <ul style="list-style-type: none"> • <i>Կտրել հանգիստ վիճակում,</i> • <i>կտրելիս լինել ուշադիր, որ մատները չմնան մկրատի արանքում,</i> • <i>չի կարելի մկրատը փոխանցել սուր ծայրն առաջ դիրքով,</i> • <i>մկրատը պետք է փոխանցել փակ վիճակում, «ողակներն առաջ, սուր ծայրը ձեռքի ափի մեջ» դիրքով,</i> • <i>աշխատանքն ավարտելուց հետք մկրատը պահել տուփի մեջ:</i>

ՍՈՍՆՁՈՒՄ

Թղթե շինվածքներ պատրաստելիս հաճախ ենք սուսինձ օգտագործում: Նրանով թղթի զանազան մասերը միացնում ենք միմյանց: Սուսինձների բազմաթիվ տարատեսակներ կան՝ ատաղձագործական, սիլիկատային, ացետոնային, պոլիվինիլացետատային էմուլսիա, խեժանյութերից և այլուրից (օսլա) պատրաստված սուսինձները և այլն: Չնայած սուսինձների այդ բազմազանությանը, խորհուրդ է տրվում տեխնոլոգիայի դասերին օգտագործել ՊՎԱ (պոլիվինիլացետատային) սուսինձը, որով աշխատելիս չորանալուց հետո թղթի վրա առաջանում է էլաստիկ, թափանցիկ թաղանթ, հետքեր չի թողնում, իսկ դա խոսում է աշխատանքի որակի մասին: Կազմարարական աշխատանքներում օգտագործում են էմուլսիա: Դրանից ստվարաթուղթը դառնում է ամուր և

առաձգական: Սոսինձը թղթի վրա քսում են վրձնով, բարակ շերտով՝ սկսելով թղթի կենտրոնից և հետզհետե մոտենալով եզրերին: Որոշ դեպքերում անհրաժեշտություն չկա թղթի ամբողջ մակերեսին սոսինձ քսել, քսում են միայն եզրերին, բարակ շերտով: Վրան մաքուր թուղթ են դնում ու շինվածքը հարթեցնում ձեռքերով: Սովորաբար այսպիսի աշխատանքները կարիք չունեն մամլման:

Թուղթը սոսնձապատում են վրձնով: Եթե սոսնձվող մակերեսը մեծ է, նպատակահարմար է օգտագործել խոզանակ: Խոնավանալուց թուղթն ընդարձակվում է: Եթե սոսինձը թղթին քսելուց հետո անմիջապես փակցնենք մյուս թղթին կամ ստվարաթղթին և թույլ չտանք, որ նա մինչև վերջ ընդարձակվի, ապա չորանալուց հետո թղթի վրա կառաջանան կնճիռներ և ծալքեր: Դրանից խուսափելու համար թուղթը սոսնձապատելուց հետո պետք է սպասել 2-3 րոպե և նոր փակցնել մյուս թղթին:

Այսօր վաճառքում կան մատիտ-սոսինձներ, որոնք հարմար են օգտագործել տեխնոլոգիայի դասերին:


Սոսնձման գործողություն կատարելիս անհրաժեշտ է պահպանել սոսնձման հաջորդականությունը՝

*սոսնձվող դեպալը շիտակ կողմով դնել փորձաթղթի վրա,
դեպալի հակառակ /թարս/ կողմին քսել սոսինձը,
սոսինձը քսել հավասարաչափ՝ կենտրոնից դեպի եզրը,
սոսնձվող դեպալը թեթևակի հպել փորձաթղթի վրա, որպեսզի ավել-
լորդ սոսինձը դուրս գա,*

սոսնձվող դեպալը տեղադրել համապատասխան տեղում, վրան սպիտակ թուղթ դնել և թույլ սեղմել, ապա հարթեցնել սպունգի, ձեռքի ակի միջոցով,

անհրաժեշտության դեպքում /եթե սոսնձվող մակերեսը մեծ է/, սոսնձ-
վող դետալների վրա ծանրություն դնել, մի քիչ պահել, ապա՝ չորացնել:

Ենթաթեմա 4.



ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.

Ապլիկացիա: Խճանկար: Պատրաստել հարթ ապլիկացիա/խճանկար թղթով: Կառուցողական և տրամաբանական աշխատանքներ:

ԱՊԼԻԿԱՑԻԱ


Ապլիկացիան (applicatio) լատիներեն բառ է, նշանակում է դրվագում, ներդրվագում, տարբեր նյութերից գեղարվեստական աշխատանքի ստեղծում վերադրման եղանակով:

Ապլիկացիան հարթության վրա միատեսակ կամ տարբեր նյութեր ամրացնելու (սոսնձման կամ կարելու) տեխնիկան է, որն արտահայտում է որոշակի պատկեր: Դրանք կարող են լինել զարդանախշեր, սյուժեներ, թեմատիկ պատկերներ և այլն: Ապլիկացիայի համար որպես նյութ կարելի է օգտագործել գունավոր թղթի տարբեր տեսակներ, գործվածքներ, կաշի, մորթի, փետուր, չորացած ճյուղեր, սերմեր, կորիզներ, ծղոտ և այլն: Յուրաքանչյուր նյութ ունի ամրացման իր տեխնիկան՝ սոսնձելու, կարելու:

Աշխատանքային գործիքներն են՝ տարբեր տեսակի մկրատներ, գրասենյակային դանակ, հերյուն, սոսինձ, մատիտներ, վրձին: Սոսինձները, սոսնձվող նյութերը պետք է ճիշտ ընտրել: Սոսնձելիս պետք է հաշվի առնել սոսնձման տեխնոլոգիան: Յուրաքանչյուր դետալ սոսնձելուց հետո վրան պետք է թուղթ


դնել, ապա լաթով կամ սպունգով շփել՝ ավելորդ սոսինձը հեռացնելու նպատակով, անհրաժեշտության դեպքում կարելի է առանձին դետալներ սոսնձելուց հետո վրան ծանրություն դնել: Սոսնձման աշխատանքներ կատարելիս անհրաժեշտ է օգտվել փորձաթղթից:

Առաջադրանք 1. Կտրիչ նկար 1-ում պատկերված քառակուսին՝ ըստ նշագծերի և 2-րդ նկարի նմանությամբ պատկերներ ստացիր:







Նկար 1.

Այնուհետև առաջադրանքը կարելի է փոքր-ինչ բարդացնել:





Նկար 2.

Առաջադրանք 2. Կտրտիր քառակուսին՝ ըստ նշագծերի (նկար 3), ստացված երկրաչափական պատկերներով նկար 4-ի նմանությամբ կենդանիներ պատկերիր ու սոսնձիր:




Նկար 4.

Այս առաջադրանքները կատարելիս ձևավորվում ու կատարելագործվում են ձեր գործնական կարողությունները՝ նշագծում ըստ շաբլոնի կամ ծալումով, մկրատով աշխատելու, վրձնով սոսնձելու, դետալներ սոսնձելու ունակությունների ձեռքբերում, ամրապնդվում են երկրաչափական պատկերների մասին գիտելիքները՝ ըստ չափի, գույնի, տարածական դասավորության տարբերակելու կարողությունը:



ԽՃԱՆԿԱՐ

Խճանկարը /mozaika/-ֆրանսերեն բառ է, նշանակում է նախշ կամ մանր կտորների միջոցով արտահայտման ձև: Այն կատարվում է միատեսակ կամ տարբեր նյութերով: Խճանկարները լինում են միագույն, բազմագույն: Միագույն խճանկարի համար անհրաժեշտ է մանր կտրատած միագույն թղթեր, իսկ բազմագույնի դեպքում՝ տարբեր գույների թղթեր:



ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Փորձիր պատրաստել խճանկար գունավոր թղթերից քո սիրած հեքիաթի մոտիվներով:

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Առաջադրանք 1.


Պատկերել թռչուն՝ պոչն այնպիսի 7 գույնի փետուրներով, որոնք ըստ չափի և գույնի դասավորված լինեն ծիածանի գույների հաջորդականությամբ:

Որպես առաջադրանքի հուշում-մոդել տրված են երկու նկար: Առաջին նկարում տրված են. ա/ թռչունի փոքրացված պատկերը՝ պոչի վրա 7 փետուր, որոնցից միայն մեկն է գունավոր և գունային շրջան, գ/ երեք չափի ձևանմուշներ՝ մեծ, միջին, փոքր:

Նախ պետք է դասավորել փետուրները՝ պահպանելով համաչափության սկզբունքը. Ամենամեծ փետուրը՝ կենտրոնում, աջ և ձախ կողմերում՝ միջին չափի երկուսական, եզրերում՝ մեկական փետուր:



Նկար 1.




Նկար 2.

Տվյալ առաջադրանքը սկզբում լուծվում է մկրովի, ապա՝ գործնականորեն :

Առաջադրանք 2.

Որպես օրինակ ներկայացնենք երկրաչափական պատկերներից կազմված խնդիր-ապլիկացիան՝ «Ո՞ր ճնճուկն է թռել» :



Ենթաթեմա 5-6.

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.

Պատրաստել ապլիկացիա/խճանկար երկրաչափական պատկերներով:

ՉԻՆԱԿԱՆ ԳԼՈՒԽԿՈՏՐՈՒԿ և այլ ինքնաշեն խաղերի պատրաստում:

Այժմ եկեք ծանոթանանք «Չինական գլուխկոտրուկ» խաղի հետ::

Առաջադրանք 1. Գունավոր ստվարաթղթի վրա գծանշել 100 մմ կողմով քառակուսի, կտրտել առանձին երկրաչափական պատկերներ (ըստ նկար 1-ի) : Ստացվում են հետևյալ երկրաչափական պատկերները.


մեծ ուղղանկյուն եռանկյուն - 2 հատ

միջին ուղղանկյուն եռանկյուն - 1 հատ

փոքր ուղղանկյուն եռանկյուն - 2 հատ

քառակուսի - 1 հատ

զուգահեռագիծ - 1 հատ




Նկար 1.

Ստացված երկրաչափական պատկերներից կարելի է ոչ միայն կենդանիների, այլև այլ պատկերներ ստանալ: Ինչ խոսք, առաջադրանքն այնքան էլ դյուրին չէ, քանի որ «գլուխկոտրուկ» է. նույնիսկ այդ յոթ պատկերները սկզբնական քառակուսու մեջ տեղադրելու (հավաքելու) համար անհրաժեշտ է լավ մտածել: Կարելի է նկարներ ցուցադրել հուշելու համար:


Պետք է գտնել օրինաչափությունը, հասկանալ, որ յուրաքանչյուր նկարում պետք է օգտագործվեն բոլոր 7 երկրաչափական պատկերները, այնպես, որ երկրաչափական պատկերները միմյանց չձածկեն: Նման առաջադրանքը կատարելու համար ոչ միայն խելամտություն, այլև համբերություն է պետք:

«Չինական գլուխկոտրուկի» 7 տարրերից կարելի է ոչ միայն կոնստրուկտավորել տարբեր պատկերներ, այլև նախնական տեղեկություններ ստանալ երկրաչափությունից: Օրինակ, ի՞նչ է քառակուսին: Իհարկե, կրտսեր դպրոցականները դա գիտեն, կարող են անգամ պատկերել, բայց չեն կարող բառերով նկարագրել այն: Իսկ քառանկյունը, չէ՞ որ ամեն քառանկյուն քառակուսի չէ, իսկ զուգահեռագի՞ծը:



ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2.



Խճանկար շրջանի մասերից



ԱՌԱՋԱԴՐԱՆՔ.

Շրջանի մասերի դետալներից կոնստրուկտավորել տարբեր պատկերներ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3.



ԱՌԱՋԱԴՐԱՆՔ.

Էլիպսի մասերից կոնստրուկտավորել տարբեր պատկերներ:

Ենթաթեմա 7.

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.

«Իմ սիրած խաղալիքը» հորինվածքով ապլիկացիա: Պատրաստել ապլիկացիա սիրած մուլտֆիլմի /հեքիաթի/ մոտիվներով:

Պատրաստել ապլիկացիա՝ «Իմ սիրած խաղալիքը»:


Վերհիշեք սիրելի մուլտֆիլմը /կամ հեքիաթը/:

Փորձեք մտովի պատկերացնել ամենատպավորված, ամենահիշարժան դրվագը և այն պատկերել ապլիկացիայի միջոցով:

Աշխատանքները փակցնել դասասենյակի տեսանելի մասում և ընկերներին պատմել այդ մուլտֆիլմը /հեքիաթը/:

Ենթաթեմա 8.

ՕՐԻԳԱՄԻԻ ԱՏԵՂԾՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ



Բոլորս էլ ամենատարբեր իրավիճակներում, տարբեր առիթներով ծալում ենք թուղթը, բայց շատերիս անձանոթ է օրիգամիի արվեստը: Ե՞րբ է այն ծնունդ առել, դժվար է ստույգ ասել, բայց այն տարածված է եղել բոլոր այն երկրներում, որտեղ ծանոթ էին թղթին: Թղթի ծալումներով մոդելների ստեղծման արվեստն ավելի քան

2000 տարեկան է:

Օրիգամին իր անվանումն ստացել է ճապոներեն «օրի»՝ ծալել, և «գամի»՝ թուղթ, բառերից: Հնում օրիգամին ոչ միայն արվեստ էր, այլև ճշգրտություն և համբերատարություն ուսուցանող գիտություն: Օրիգամի արվեստը ծնունդ է առել Չինաստանում 1-2-րդ դարերի սահմանագծին, իսկ 6-րդ դարում այն թափանցել է Ճապոնիա և դարձել ճապոնական մշակույթի անբաժանելի մասը:

Օրիգամին կարելի է համադրել խաղի հետ: Թղթից ծալելով կենդանիների նմուշներ՝ դրանց օգնությամբ դուք կարող եք պատմել ծանոթ հեքիաթներ, կարող եք «դառնալ» հեքիաթային հերոսներ, ճանապարհորդել գույների աշխարհում և այլն:

ԵՐԱՋԱՆՔ՝ ԹՂԹԵ ԿՈՌԻՆԿԻ ՏԵՍՔՈՎ

ՍԱՌԱԿՈՆ և 1000 կռունկները:

Սադակո Սասակին ծնվել է Ճապոնիայում 1943 թվականին: 1945 թվականի օգոստոսի 6-ին Ճապոնիայի Հիրոսիմա քաղաքի վրա պայթեց ատոմային ռումբը: Հազարավոր մարդիկ զոհվեցին: Սադակոն ապրում էր Հիրոսիմա քաղաքից ոչ շատ հեռու: Նրա ծնողները զոհվեցին ատոմային ռումբի պայթյունից: Իսկ տարիներ անց աղջնակի մոտ ախտորոշվեց արյան քաղցկեղ: Նա դատապարտված էր մահվան: Հարազատներն ամեն օր այցելում էին, փորձելով ուրախացնել, հուսադրել նրան: Մի օր Սադակոյի ընկրներից մեկը նրան պատմում է մի պատմություն կռունկի մասին: Ճապոնացիները հավատում են, որ կռունկները երազանքներ են իրականացնում: Կռունկը Ճապոնիայում համարվում է սուրբ թռչուն, որն ապրում է հազար տարի: Ըստ ճապոնական լեգենդի՝ մարդու երազանքը կկատարվի, եթե նա պատրաստի հազար հատ թղթե կռունկ: Սադակոն նույնպես հավատում էր գեղեցիկ ավանդույթին՝ 1000 կռունկը կիրականացնել իր բոլոր ցանկություններն ու երազանքները: Սադակոն սկսեց պատրաստել կռունկներ: Նա երազում էր ապրել, սովորել, զբաղվել սպորտով: Ամեն օր նա ավել շատ կռունկներ էր պատրաստում: Որքան շատ էր պատրաստում, այնքան ավելի լավ էր զգում իրեն: Բայց... աղջնակն ընդամենը 644 կռունկ հասցրեց ծալել: Սադակոն մահացավ 14 տարեկան հասակում: Մնացած 354 կռունկները պատրաստեցին նրա ընկերները, ու բոլոր 1000 կռունկները նրա հետ գերեզման դրեցին:

Ընկերները որոշեցին կանգնեցնել Սադակոյի արձանը, դրա համար սկսեցին գումար հավաքել, և միայն 1958թ.-ին կարողացան հավաքել անհրաժեշտ գումարը:

Սադակոյի արձանը Հիրոսիմայի խաղաղության պուրակում է՝ Խաղաղության թանգարանի դիմաց: Այնտեղ մի հսկա օբելիսկ է վեր խոյանում՝ աղջկա քանդակ՝ ոսկե կռունկը ձեռքին: Այն կոչվում է «Խաղաղության մանկական հուշարձան»:

Աշխարհի բոլոր երեխաները, ի նշան Սադակոյի հիշատակի ու բարի կամքի, թղթե կռունկների դրասանդներ են բերում, որպեսզի մոլորակի վրա կանխվի ագրեսիան:


...Ու մինչ այսօր ճապոնացու համար «օրիգամի» եզրոյթն ասոցացվում է թղթե կռունկի հետ:

Հուշարձանի վրա գրված է.

Սա մեր լացն է,

Սա մեր աղոթքն է,

Աշխարհին խաղաղություն:



Սադակուն դարձել է խաղաղության խորհրդանիշ ողջ աշխարհում: Նա իր պատրաստած կռունկների թևերին գրում էր «Խաղաղություն» բառը, որպեսզի այն կռունկի թևերով տարածվի ողջ աշխարհում...ու թղթե կռունկը դարձավ խաղաղության խորհրդանիշ:

Աշխարհի գրեթե բոլոր երկրներում երեխաներին ծանոթացնում են Սադակոյի կյանքի պատմությանը: Երեխաները սիրով սովորում են կռունկներ պատրաստել, որոնք նվիրում են իրենց ընկերներին՝ ի նշան հաշտության և բարեկեցության: Թղթե կռունկներով երեխաները զարդարում են Սադակոյի հուշարձանը, դրանով արտահայտելով աշխարհը խաղաղ տեսնելու իրենց նվիրական ցանկությունը:

Հայ երեխաները նույնպես մասնակցում են այդ գեղեցիկ նախաձեռնությանը և ամեն տարի Սադակոյի հիշատակի օրը 1000 թղթե կռունկ են ուղարկում Հիրոսիմա, ի հավաստում մոլորակը խաղաղ տեսնելու իրենց ցանկության:



Միացյալ Նահանգների Սիեթլ քաղաքի խաղաղության պուրակում նույնպես կանգնեցրել են Սադակոյի արձանը: Այդ պուրակը կառուցվել է դոկտոր Ֆլոյդ Սըչմոյի կողմից, երբ նա 93 տարեկան էր: Այդ տարիքում 1988թվականին ԱՄՆ-ում Ֆլոյդ Սըչմոյեն շահում է Հերոսիմայի գլխավոր մրցանակը՝ 5000 ԱՄՆ դոլար և այդ ողջ գումարը օգտագործում է Վաշինգտոնի համալսարանին կից փոքրիկ հողատարածքը մաքրելու վրա: Աղբակույտերից և մացառուտներից ազատելով այդ փոքրիկ հողակտորը, դոկտոր Սըչմոյեն և նրա օգնական կամավորները դարձնում են մի գեղեցիկ անկյուն, անվանելով «խաղաղության պուրակ»:

Պուրակի բացման հանդիսավոր արարողությունը տեղի է ունենցել 1990 թվականի օգոստոսի 6-ին, Հիրոսիմայի ռմբակոծման 45-րդ տարելիցի օրը:

1990 թվականից ի վեր ամեն տարի այդ օրը հազարավոր երեխաներ են այցելում Սիեթլ քաղաքի «խաղաղության պուրակ»՝ բերելով թղթե կոունկներ, այդ կերպ արտահայտելով աշխարհը խաղաղ տեսնելու իրենց ցանկությունը:

Այդ օրերին, եթե այցելեք պուրակ, կարող եք տեսնել Սադակոյի արձանը՝ շրջապատված բազմաթիվ թղթե կռունկներով:

Սադակո Սասակին ամբողջ աշխարհում դարձել է խաղաղության խորհրդանիշ. նա մահից հետո էլ շարունակում է պայքարել, որ այլևս չլինեն պատերազմներ, ավերվածություններ, մարդկային զոհեր: Որ աշխարհում ոչ մի երեխա չմնա առանց ծնող և ոչ մի մայր չկորցնի իր զավակին:





Ենթաթեմա 9.



ՕՐԻԳԱՄԻՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Եկեք սկսենք օրիգամիի ուսուցումը՝ սովորենք ճիշտ ծալման հնարները: Ծանոթանանք օրիգամիում ընդունված պայմանական նշաններին:


Սլաքները ցույց են տալիս ծալման ուղղությունը:





1. Ծալման գիծ



1. Ծալք «սար»՝
դեպի դուրս





3. Ծալք «ծոր»՝
դեպի ներս





4. Ծալք «կայծակ»


5. Համադրել




6. Պտտել, թեքել





7. Շրջել հակառակ կողմը




8. Ծալել և հետ ծալել (բացել, նշագծելով ծալքը)




9. Պատկերի մեծացում





10. Ծալել դեպի ներս



11. Ծալել դեպի դուրս

Ենթաթեմա 10-11-12

Ինքնուրույն կարդալ օրիգամիի պարզ գծագրեր:

Պատրաստել տարբեր շինվածքներ:


ԲԱԺԱԿ.



Նկար 1.


Սա օրիգամիի պարզագույն մոդելներից է, և բոլորն էլ հեշտությամբ կարող են այն պատրաստել:

1. Թուղթը ծալել անկյունագծով: Նկ. 1.1




2. Երկտակ ծավլած թղթի վերին շերտը դեպի ներքև ծալել այնպես, որ եզրը համընկնի մոդելի ստորին եզրի՝ առաջին գործողության ժամանակ առաջացած ծավլածքի հետ:


Նկ. 1.2




3. Երկրորդ գործողության ժամանակ ստացված ծալքը ետ ծալել: Նկար 1.3



4. Ծալել ձախ անկյունն այնպես, որ եզրը համընկնի նկար 1.2-ի ծալքի եզրին, ինչպես ցույց է տրված նկար 1.4-ում:




5. Նույն կերպ ծալել աջ անկյունը ևս: Նկար 1.5




Նկ. 1.5

6. Մոդելի վերին անկյան արտաքին /վրայի/ շերտը ետ ծալել դեպի ներքև և ամուր սեղմել 4-րդ ու 5-րդ գործողության ժամանակ առաջացած գծին: Նկար 1.6




Նկ. 1.6

7. Նույն գործողությունը կատարել նաև մոդելի հակառակ կողմում: Փոքր-ինչ սեղմել մոդելը վերին անկյունների երկարությամբ /նկար 1.7/ և բաժակն արդեն պատրաստ է:



Նկ. 1.7


ԷՋԱՆՇԱՆ



Նկ. 2


Դուք երբեք չեք կորցնի գրքի այն էջը, որտեղ կանգ եք առել, եթե պատրաստեք նկար 2-ում պատկերված այս անկյունակ-էջանշանը:

1.




Նկ. 2.1

2.




Նկ. 2.2

3.




Նկ. 2.3

1.




Նկ. 2.4

2.



Նկ. 2.5

3.



Նկ. 2.6

ՀԱՆԵԼՈՒԿ Այն ի՞նչն է, ի՞նչը,
Հարթ է, ուղղանկյուն,
Հուշում է, օգնում, ցուցանում,
Անհրաժեշտ էջը բացում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Փորձեք պատրաստել նախընտրած մոդելները ըստ ուսուցչի տված գծագրի:

Գրականություն

1. Տեխնոլոգիա – 2, դասագիրք հանրակրթական դպրոցի երկրորդ դասարանի համար / Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերոյան. – Եր., Տիգրան Մեծ, 2018:
2. Պապիկյան Կ. Տեխնոլոգիայի դասավանդման մեթոդիկա, 1-4-րդ դաս.- Եր., 2019.- 160 էջ:
3. Պապիկյան Կ. Օրիգամի.- Եր., Զանգակ-97, 2009.- 46 էջ:
4. Պապիկյան Կ. «Տեխնոլոգիա» առարկայի դասապլաններ.- Եր., «ՎՄՎ-Պրինտ», 2019:
5. Փաշայան Ա. Կավե սալիկներից մինչև թուղթ.- Եր., Աստղիկ, 2007.- 95 էջ:
6. Տեխնոլոգիա (ուսուցչի ձեռնարկ) 1-4 դասարաններ / Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերոյան. – Եր., Տիգրան Մեծ, 2008:
7. Տեխնոլոգիա առարկայում ինտեգրվող ձեռնարկատիրական կրթություն. չափորոշիչ, ծրագիր, ուսուցչի ձեռնարկ, 2-րդ դաս. / Հովհաննիսյան Ա., Մանուկյան Ա., Պապիկյան Կ., - Եր., Տիգրան Մեծ, 2017.- 48 էջ: